

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԴԻՂԱԿՏԻԿԱ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՀԱՄԱԴՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Դիտարկվում է մանկավարժական գործունեության կարևորագույն բաղադրամասերի՝ դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման մեթոդների փոխներգործուն համադրման խնդիրը: Սկզբունքների և մեթոդների ներկայացվող զուգադրությունները կարող են ապահովել առավել արդյունավետություն ուսուցման գործընթացում:

Առանցքային բառեր. մանկավարժական գործունեություն, ուսուցում, դիդակտիկա, սկզբունքներ, ուսուցման մեթոդներ, սկզբունքների և մեթոդների համադրություններ:

Ներածություն. Մանկավարժական գործունեությունը հատուկ կազմակերպվող գործընթացների ամբողջություն է, որի նպատակն ու վերջնարդյունքը անձի սոցիալականացումն է՝ նրա զարգացման, ձևավորման և ինքնադաստիարակության ճանապարհով [1,2], ուսուցման ու կրթության միջոցով՝ *դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման մեթոդների* գործադրմամբ: Վերջիններիս քննության վերաբերյալ հսկայաձևավալ գրականություն կա: Սակայն դրանք սովորաբար դիտարկվում են առանձին-առանձին՝ չհատկանշելով դրանց փոխներգործության հնարավորությունները [1,2,3]: Մինչդեռ հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլ պահանջ է առաջադրում՝ ուսուցման կատարելագործման տեսանկյունից վերանայելու սկզբունքների և մեթոդների արդյունավետության հարցը, նորովի դիտարկելու հատկապես դրանց համադրման և փոխներգործության լիարժեքությունը: Սկզբունքների և մեթոդների ստորև առաջարկվող համադրությունը, որ կազմում է սույն աշխատանքի բովանդակությունը և նորույթը, կարող է նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Մանկավարժական գործունեության կառուցվածքը. Դիդակտիկայի հիմնական հասկացությունը ուսուցումն է, որի նպատակը սովորողին բնության և հասարակության զարգացման օրինաչափությունների իմացությամբ զինելն է [4]՝ արդեն իսկ ճանաչվածի ուսուցմամբ: Ուսուցման մեթոդները սովորեցնողի և սովորողի աշխատանքային պատմականորեն ձևավորվող ձևերի, միջոցների ու հնարների ամբողջությունն են: Վերջինները առաջադրվում և գործադրվում են դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման մեթոդների համադրության պահանջով: Դրանց մի մասը ավանդական են, մյուսները՝ նոր կամ նորացված: Աշխատանքում շեշտադրվում են ուսուցման հատկապես նոր և նորացված մեթոդներն ու հնարները:

Կրթական գործընթացում ընդունված ուսուցման ձևերը ընդհանուր անունով կոչվում են **դաս**: Ավանդական դասն իր վաղուց ի վեր հաստատագրված առավելությունների հետ ունի նաև որոշակի թերություններ (սովորողի անհատական առանձնահատկությունները և զարգացման անհատական տեմպերը հաշվի չառնելը, նրա ինքնուրույն աշխատանքի ու ակտիվության թույլ խթանումը, գնահատման գործընթացում սուբյեկտիվ գործոնի առկայությունը) [5], որոնց վերացմանն են ուղղված մանկավարժական մտքի կողմից անընդհատ կատարվող փնտրտուքները:


Ուսուցման ժամանակակից գործընթացում կիրառվում են ինչպես ավանդական՝ խոսքային և դիդակտիկական, այնպես էլ նորագույն՝ տեխնիկական միջոցներ: Դիդակտիկական են բնական, ծայնային, պատկերային, ծավալային, գրաֆիկական, այսօր նաև համադրված միջոցները՝ ինտերնետից օգտվելու հնարավորություններով: Տեխնիկական են քոմպիյութերային միջոցներն ու հնարավորությունները, որոնցով իրականանում է համակարգչային ուսուցումը:

Ավանդական են ուսուցման հոգեբանական ներգործման, կազմակերպական, տրամաբանական հնարները: Սովորողների մեջ հետաքրքրություն են առաջացնում հատկապես նորագույն հնարները՝ քառաբաժանումը, խորանարդի, խճանկարի, տոհմաճառի, T-աձև, M-աձև աղյուսակների, պրիզմայի, ձնագնդու, անվի տեսքով գիտելիքների պատկերումը, քարտեզագրումը, համակցային, ինտերակտիվ հնարների, փոխներգործուն գրառումների համակարգի, Վենի դիագրամի օգտագործումը և այլն [5]: Փոփոխության են ենթակա ուսուցման հատկապես ձևերը, միջոցներն ու հնարները:

Դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման մեթոդների առաջարկվող համադրությունը. Ուսուցման գործընթացի արդյունավետությանը կարելի է հասնել դիդակտիկայի սկզբունքների և ուսուցման մեթոդների նպատակահարմար համադրությամբ (նկ.) [5,7]:

1. Սովորողների գիտակցականության և ակտիվության սկզբունք. Հենվում է անձի գիտակցական էության վրա, որից բխում է մանկավարժական կարևոր օրինաչափություններից մեկը. **անձնավորությունը ոչ միայն ուսուցման (ներգործման) օբյեկտ է, այլև սուբյեկտ:** Գիտակցականության հետ սերտորեն կապված է **մոտիվացիայի** գաղափարը [3,6]: Անձնավորության ճանաչողական գործունեությունը մոտիվացված է, եթե նա գիտի՝ *«ինչո՞ւ է ուզում սովորել»* հարցի պատասխանը, ուսուցանվող նյութի նկատմամբ ունի դրական վերաբերմունք, հետաքրքրություն: Սովորողի գիտակցականությունը կարելի է մոտիվացնել նրա ճանաչողական **ակտվության** և ինքնուրույնության խթանման միջոցով՝ նրա մեջ առաջացնելով հետաքրքրություն ոչ միայն հաղորդվող նյութի, այլև սովորելու

գործընթացի նկատմամբ (սովորե՛լ սովորեցնել): Այս սկզբունքին համադրվում են ավանդական **խոսքային մեթոդները՝ բանավոր շարադրման, գրույցի, գրավոր շարադրման**: Հանրահայտ են սրանց առավելությունները [2,3]: Այսօր խոսքային մեթոդների հետ հաջողությամբ կիրառվում են նաև նորացված կամ նոր հնարներ [7]. **բանավեճ** (որևէ հիմնախնդրի՝ սովորողների ուժերով բանավոր քննարկումն է), **ճանաչողական խաղեր** (սովորողներին առաջարկվում է ելք գտնել իրականությանը համապատասխան հատուկ կազմակերպված իրադրություններից. կարող է լինել իրավիճակի բեմադրում՝ դերերի բաշխումով): Դիդակտիկական խաղեր են նաև **ուղեղների գեներացումը, փինբորդ-փեխնիկան** (բանավեճի կամ գրույցի համակցումն է գործնական մեթոդի հետ), **ուղեղային գրոհը** (մասնակիցներն անկաշկանդ, առանց սխալվելու մտավախության, արտահայտում են հիմնահարցի վերաբերյալ իրենց մտքերը): Այս խաղերին սովորողները կարող են մասնակցել ինչպես անհատական, այնպես էլ թիմային սկզբունքով: Առավել արդյունավետ է աշխատանքի թիմային ձևը: Սրանք առավելագույնս ակտիվացնում են սովորողների մտածողությունը, զարգացնում տրամաբանությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը, բանավեճի, խոսքի մշակույթը: Առաջացնում են հետաքրքրություն, մրցակցության ոգի, հիմնահարցը ինքնուրույն լուծելու մոտիվացիա:



Նկ. Ուսուցման գործընթացի բաղադրիչների համադրումը

2. Ակնառուության սկզբունք. Ըստ Յան Ամոս Կոմենսկու [8]՝ ուսուցման «ոսկե կանոն» է. տեսանելին տալ տեսողությանը, շոշափելին՝ շոշափելիքին, ճաշակելին՝ ճաշակելիքին և սովորելու ընթացքին մասնակից դարձնել բոլոր զգայարանները: Կ. Ուշինսկին գտնում էր, որ սխալ է ամեն ինչ զգայական ճանապարհով սովորեցնելը. դա կաշկանդում է սովորողի վերացարկված մտածողության զարգացումը [9]: Իսկ Լ.Վիգոսկին գտնում է, որ պետք է չափավորվի զննականության դերը ուսուցման գործընթացում: Առավել կարևոր է զննականությունից ընդհանրացումների հանգելը (մետաղները սառն են. բայց ավելի կարևոր է իմանալ՝ ինչո՞ւ են դրանք սառը) [10]: Այս սկզբունքին համադրելի են **զննականության մեթոդները. ցուցադրումը** հիմնավորել է Յ. Կոմենսկին [8]: Քանի որ ուսուցման բնահարմարության ուսմունք էր առաջադրում, հետևապես՝ հիմնավորում էր ամեն ինչ զննելով, ցուցադրելով բացատրելու և ուսուցանելու տեսությունը: Ավանդական հայտնի մեթոդ է նաև **դիպրումը**: Սրանք կարող են իրագործվել ինչպես լաբորատորիայում, արտադրությունում, բնության մեջ, այնպես էլ համակարգչային տեխնիկայի միջոցով:

3. Գիտելիքների կայունության, կարողությունների և հմտությունների (կոմպետենցիաների) զարգացման սկզբունք. Սովորողը պետք է կարողանա գիտելիքները կիրառել գործնականում՝ հետագա ավելի բարդ գործունեության ընթացքում: Սկզբունքը հակադիր է մակերեսայնությանը: Անհրաժեշտ է զարգացնել սովորողների տրամաբանական հիշողությունը՝ նրանց գիտակցության մեջ ամրակայելով առանցքային գաղափարները, սկզբունքները, օրինաչափությունները: Այս սկզբունքին համադրվում են ավանդական **գործնական մեթոդները՝** գործնական աշխատանք, սեմինար պարապմունք, լաբորատոր փորձ և այլն:

4. Տեսականի և գործնականի (գիտության և պրակտիկայի) կապի սկզբունք. Տեսականի և գործնականի կապի ըմբռնման և գործադրման կարողությունների ձևավորումը սոցիալական պատվեր է և սովորեցնելու գլխավոր նպատակը՝ սովորողի մեջ ձևավորել այնպիսի որակներ և ունակություններ, որոնք նա կարողանա գործադրել աշխատանքային (մասնագիտական) գործունեության ընթացքում: Այս սկզբունքին համադրվում է **պրակտիկայի** մեթոդը:

5. Համակարգվածության, հաջորդականության և հետևողականության սկզբունք. Հիմքում ընկած է օբյեկտիվ աշխարհի համընդհանուր զարգացման օրենքը. տիեզերքը և նրանում գործող ամենայն ինչ համակարգեր են: Մարդկային մտածողությունը ևս զարգանում է համակարգված: Հետևապես, համակարգված պետք է լինեն նաև ուսուցումը և ուսումնական առարկայի բովանդակությունը, որը պետք է արտացոլի տվյալ գիտության գիտելիքների համակարգվածությունը: Սկզբունքի պահանջն է ուսուցման մեթոդաբանությանը. ուսուցան-

վող նյութը բաժանել տրամաբանորեն իրար հետ կապված, սակայն հարաբերական ամբողջականություն ներկայացնող մասերի՝ մոդուլների և ապահովել դրանց սերտաճումը ընդհանուր տրամաբանության մեջ, այսինքն՝ պահպանել մասի և ամբողջի, մասնավորի և ընդհանուրի փոխկապակցվածությունը: Ապահովել ինչպես առարկայի թեմաների միջև եղած, այնպես էլ միջառարկայական կապերի գիտակցումը: Դա թեթևացնում է հիշողության բեռը, նաև ձևավորում է գիտական աշխարհայացք: Այս սկզբունքով և ուսուցման մեթոդաբանությամբ են կառուցվում ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը:

Վերը թվարկված մեթոդները կիրառելի են հատկապես բակալավրատում, ինչպես նաև մագիստրատուրայում:

6. Անհատական (տարբերակված) ուսուցման սկզբունք. Անհատական կամ խմբային ուսուցումն է: Իրագործվում է **անհատական ուսուցման մեթոդով**, որը նոր չէ, սակայն գործադրվում է նորովի մոտեցմամբ [3,4,11,12,13]:

Էությունը հետևյալն է: Խմբում ուսանողների ընդհանուր մակարդակը տարեսկզբին պարզելուց (դիագնոստիկայից [13]) հետո նրանց կարելի է բաժանել երեք՝ թույլ, միջակ և ուժեղ ենթախմբերի՝ յուրաքանչյուրին տալով իր գիտելիքներին համապատասխան առաջադրանքներ: Նման պայմաններում թույլերը, հեշտից գնալով դժվարը, աստիճանաբար աճում են՝ հասնելով ուժեղներին: Իսկ ուժեղները չեն ձանձրանում՝ ստանալով իրենց կարողություններին համապատասխան առաջադրանքներ: Կարելի է օգտագործել նաև ուժեղների կարողությունները՝ «թույլ+ուժեղ» ենթախմբերի բաժանելով խումբը: Ուժեղները սովորեցնում են թույլերին (*սովորում են սովորեցնելու՝ վ*): Աշխատանքի այս ձևը հարմար է հատկապես գործնական աշխատանքի ժամանակ: Ճիշտ է, սովորեցնողի համար ստեղծվում է լրացուցիչ դժվարություն՝ ամեն անգամ առաջադրանքները տարբերակելու համար, սակայն կարելի է ստեղծել գործնական աշխատանքների ձեռնարկ՝ աստղանիշերով առանձնացնելով առաջադրանքները:

Սկզբունքի պահանջներն են մեթոդաբանությանը. հաշվի առնել սովորողների անհատական ունակությունները՝ գիտելիքների պաշարը, նոր նյութն ընկալելու, ինքնուրույն աշխատելու կարողությունը, հավասար և բարյացակամ վերաբերմունք ապահովել բոլոր սովորողների նկատմամբ, խրախուսել (կամ հանդիմանել) ճիշտ տեղին, խթանել սովորողների հմտությունների զարգացումը, ձևավորել համոզմունք, որ սովորեցնողը միայն օգնող և կողմնորոշող է, որ սովորողը պետք է աշխատի ինքնուրույն:

Կիրառելի է և՛ բակալավրատում, և՛ մագիստրատուրայում:

7. Հաղորդվող նյութի գիտականության սկզբունք. Յուրաքանչյուր ուսումնական առարկա կառուցվում է տվյալ գիտության տրամաբանության և նվա-

ճումների հիման վրա և պահանջում է կիրառել տվյալ գիտությանը բնորոշ մեթոդներն ու ճանաչողության ուղիները, տվյալ գիտության նվաճումները:

Գիտականության սկզբունքի պահանջներն են ուսուցման մեթոդաբանությանը՝ ուսումնական նյութը կառուցել տվյալ գիտության արդի ձեռքբերումներին համապատասխան, սովորողներին ծանոթացնել ուսումնասիրվող հարցերի վերաբերյալ եղած տարբեր տեսակետներին, հերքել տվյալ գիտության մեջ առկա կեղծ-գիտական տեսակետները: Այս սկզբունքին լավագույն ձևով կարող է համադրվել **պրոբլեմային ուսուցման մեթոդը**: Մասնակիորեն է նոր [4,11,12,14,15], օգտագործում է ավանդական մեթոդների տարրերը նոր մոտեցմամբ:

Հնարը պրոբլեմային իրադրության ստեղծումն է, որի ուղիներից մեկը հին և նոր գիտելիքների միջև երևութական հակասություն առաջացնելն է: Առաջադրվում է «առեղծվածի» լուծում: Պրոբլեմը ներկայացվում է հարցերի միջոցով սովորողների մասնակցությամբ: Մեթոդը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1) Ուսուցում՝ պրոբլեմի շարադրմամբ. օգտագործվում են պատումի և դատողությունների հնարները: Սովորեցնողի կողմից շարադրվում է պրոբլեմը, սովորողները ներգրավվում և մասնակցում են օրենքների, օրինաչափությունների բացահայտման գործընթացին, կատարում եզրակացություններ: Կիրառվում են տրամաբանական հնարներ՝ ապացուցում, համեմատում, ընդհանրացում և այլն: Նպաստում է հիմնախնդիրը տեսնելուն, տրամաբանությունը և ապացուցողական խոսքը զարգացնելուն:

2) Ուսուցում՝ սովորողի ճանաչողական ինքնուրույն գործունեությամբ.

ա) Մասնակի որոնողական (էվրիստիկական կամ սոկրատյան) մեթոդ. ուսուցման ամենահին ձևն է, որը կիրառել է հույն փիլիսոփա Սոկրատեսը: Գիտելիքների հաղորդումն է զրույցի, հուզող հարցերի, առաջադրանքների և խնդիրների ձևով: Պատասխանները որոնում և ձևակերպում են սովորողները: Ակնառու և մատչելի են դառնում նյութի բաղադրամասերը: Զարգացնում է նյութի հանգուցային հարցադրումների պատասխանները որոնելու և ձևակերպելու ինքնուրույնություն:

բ) Հետազոտական մեթոդ. ընդգրկում է ինքնուրույն հետազոտական աշխատանքի բոլոր փուլերը [16]. պրոբլեմի գիտակցում, հիպոթեզի առաջադրում, խնդրի լուծման կանխատեսում և լուծում, եզրակացությունների կատարում: Նպատակը սովորողների գիտական աշխարհայացքի, ինչպես նաև նրանց նորարարական գիտական աշխատանք կատարելու կարողությունների ձևավորումն է: Զարգացնում է քննադատական մտածողություն, ստեղծագործական կարողություններ:

Ուսուցումը հենվում է դիդակտիկայի նախորդող՝ գիտելիքների կայունության, համակարգայնության, տեսականի և գործնականի կապի սկզբունքների

վրա: Այս սկզբունքը և մեթոդը կիրառելի են հատկապես մագիստրատուրայում, որտեղ սովորողը պատասխանատվություն է կրում իր հետազոտական աշխատանքի, նախաձեռնողականության և ինքնուրույնության համար [17]:

8. Ծրագրավորված (համադրված) ուսուցման սկզբունք [11,12,14]. Համակցում է նախորդ բոլոր սկզբունքների և մեթոդների առանձին տարրերը՝ ապահովելով առավել մեծ արդյունք: Ընդգրկում է երեք բաղադրամաս, որոնք կարելի է կատարել համակարգչի միջոցով. նպատակահարմար ձևով կառուցված *տեղեկությունների հաղորդում, գործնական աշխատանքի ինքնուրույն կատարում, գնահատում և սխալների ուղղում*՝ կողմնորոշելով ու բացատրելով:

Էությունը հետևյալն է. նյութը ծրագրավորվում է այնպես, որ սովորողին մատուցվի ոչ մեծ չափաբաժիններով, որոնք ներկայացվում են խիստ տրամաբանական հետևողականությամբ: Յուրաքանչյուր կողմնորոշիչներն են առաջադրանքները և սովորեցնողի ցուցումները: Ապահովվում է հետադարձ գործունեություն կապը. սովորողը հարմար պահին կարող է սովորեցնողից ստանալ անհրաժեշտ ցուցումներ, ուղղություն: Սակայն սխալվելու դեպքում սովորողը չի կարող առաջ շարժվել կամ կարող է պատահականորեն ընտրել ճիշտ պատասխանը, երբ դեռ չի յուրացրել համապատասխան ծրագիրը (ճիշտ այնպես, ինչպես այսօրվա թեստային առաջադրանքների կատարումը):

Քոմպյուտերի կիրառումը դասապրոցեսում թույլ է տալիս լուծելու մանկավարժական մի շարք հիմնախնդիրներ՝ ուսուցման անհատականացում, սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպում, ճանաչողական ակտիվության և հմտությունների զարգացում, ուսումնամեթոդական նյութերի միասնականացում և նպատակահարմար ներկայացում, սովորեցնողների լավագույն փորձի տարածում: Համակարգչային ծրագրավորված ուսուցումն ունի դիդակտիկական նշանակություն. ցանկացած պահի կրկին կարելի է գտնել անհրաժեշտ տեղեկությունը, աշխատել հարմար տեմպով, տեսանելի են դառնում սովորողի սխալները, բացառվում է գնահատելիս սովորեցնողի անհատական մոտեցման դերը: Այս վերջինն ունի ինչպես դրական (արդարացի է), այնպես էլ բացասական դեր (հաշվի չեն առնվում սովորողի անհատական առանձնահատկությունները): Նշվածներից բացի, ուսուցման այս միջոցն ունի առավել էական թերություն. չի զարգացնում սովորողների ո՛չ բանավոր և ո՛չ գրավոր խոսքի մշակույթը:

Քոմպյուտերային ուսուցման միջոցը, գործադրման առկա թերություններով հանդերձ, ուսուցման այժմեական ձևն է: Սակայն պետք է նկատել նաև հետևյալը: Քոմպյուտերային ուսուցումը ոչ թե ուսուցման նպատակ է, այլ միջոց, քանի որ ծրագրերը (ուսուցման նպատակը, բովանդակությունը և վերջնարդյունքները) մտահղացվում են սովորեցնողների կողմից, այսինքն՝ ուսուց-

ման մեթոդը, հնարները, մի խոսքով՝ տեխնոլոգիան, հղանում են սովորեցնողի մտքում (գլխում), այնուհետև ներդրվում համակարգչում: Եվ որքան էլ որ «խելացի» կամ «հմայիչ» լինեն համակարգչային ներկայացման ձևը կամ սովորող-սովորեցնող փոխգործունեությունը, միևնույնն է, չեն կարող փոխարինել կենդանի մարդուն՝ մանկավարժին՝ բառի ամենակատարյալ իմաստով: Քոմպյութերային ցանկացած ծրագիր, ինչ հնարավորություններ էլ որ ունենա, ի վերջո ստեղծվում է մի որոշակի սահմանափակ նպատակով, մինչդեռ անսպառ է կատարյալ, բազմազան (էրուդիտ) մանկավարժի ստեղծագործական երևակայությունը, որը խիստ կարևոր է մանկավարժական գործընթացի տարատեսակ, անսպասելի իրադրություններում կողմնորոշվելիս: Ինչ վերաբերում է դասի կազմակերպման նոր հայեցակիմքին, երբ սովորեցնողը ինֆորմատորից և վերահսկողից վերածվում է խորհրդատուի և կողմնորոշողի, ապա պիտի նկատել, որ որոշակիորեն դժվարանում է սովորեցնողի աշխատանքը. դժվար է տարածության վրա (համակարգչի մյուս կողմում) ճանաչել սովորողի իրական անհատական ունակությունները՝ դրանք հաշվի առնելու, նրան ճիշտ կողմնորոշելու և ուղղորդելու, նրա անհատական կարողությունները զարգացնելու համար: Դրա համար սովորեցնողը ևս պետք է ձեռք բերի նոր, անհրաժեշտ որակներ և հմտություններ: Անհրաժեշտ է սովորեցնողների համար ստեղծել մեթոդական ուղեցույցներ՝ կիրառելու դիդակտիկական նոր՝ համակարգչային հնարներ, որոնք հնարավորություն կտան համակողմանիորեն պարզելու յուրաքանչյուր սովորողի իրական գիտելիքներն ու անհատական կարողությունները:

Ծրագրավորված ուսուցումը հաջողությամբ կարող է կիրառվել և՛ բակալավրատում, և՛ մագիստրատուրայում [17]:

9. Ուսուցման մատչելիության սկզբունք. Ուսուցման գերագույն նպատակը՝ սովորողներին օբյեկտիվ իրականության օրինաչափություններն ըմբռնել տալը, նոր և ավելի բարդ գիտելիքներ ձեռք բերելու կարողություններ ձևավորելը, պահանջում է ուսուցման մատչելիություն: Մատչելի ուսուցումը ենթադրում է սովորողի իմացության մակարդակին հարիր կամ մի փոքր ավելի բարդ դժվարությունների հաղթահարում, հաղորդման և ընկալման տեմպի համապատասխանություն, նյութի ընկալում և ոչ թե մտապահում:

Ըստ Լ.Ս. Վիգորսկու՝ ուսուցման ընթացքում այն, ինչ համապատասխանում է սովորողի տվյալ պահի մակարդակին և ուղղված է նրա «հրատապ» գոտուն (որը սովորողը կարող է կատարել առանց դժվարության), չի կարող զարգացնող նշանակություն ունենալ [10]: Իսկ մատչելի ուղղված է սովորողի գիտելիքների «մերձակա գոտուն», որը սովորողին դրդում է նոր գործունեության, արդյունքն էլ լինում է նոր գիտելիքների ձեռքբերումը, հմտությունների ձևավորու-

մը: «Մերձակա գոտու» սահմանը որոշելու միջոցը սովորողին օգնություն ցույց տալու չափն է. եթե սովորողը *ինքնուրույն* կամ *կողմնորոշվելու չափով* կարողանում է լուծել առաջադրված խնդիրը, ուրեմն դժվարությունը «մերձակա գոտու» սահմանում է: Մյուս կողմից՝ նյութի մատուցումը մատչելի չէ, եթե սովորողի համար չափազանց բարդ է ու ծավալուն, առաջացնում է լարվածություն, գերհոգնածություն: Այստեղ կարևոր է նաև մանկավարժական վարպետությունը. հմուտ մանկավարժը օբյեկտիվորեն դժվարը դարձնում է մատչելի: *Հետևապես՝ թյուր-իմացություն է ուսումնական հեշտ ու պարզունակ նյութի մատուցումը դիպել որպես մատչելիության սկզբունքի գործադրում:* Իսկական կրթությունը չի կարող հեշտ ու պարզունակ լինել, քանի որ հեշտը զարգացնող հատկություն չունի:

Գիտելիքի մատուցման մոտիկից՝ հեռուն, հեշտից՝ դժվարը, պարզից՝ բարդը, հայտնիից՝ անհայտը սկզբունքը («ոսկե կանոնը»), բացահայտել է Կոմենսկին: Առաջին երեքը մասնավոր կանոններ են և թույլ են տալիս ոչ միայն դեղուկցիայից ինդուկցիա, այլև ինդուկցիայից դեդուկցիա ընթացքը: Չորրորդն ընդհանուր կանոն է. սրան հակառակ ընթացքն անիմաստ է: Ինչպես Դիստերվեզն է նկատում, պետք չէ խավար առաջացնել դեպի լույսը գնալու համար [18]:

Մատչելիության սկզբունքի կիրառումը պարտադիր է բոլոր սկզբունքների և ուսուցման մեթոդների գործադրման դեպքում:

10. Ստուգման և գնահատման սկզբունք. Ստուգումն ու գնահատումը ևս դիդակտիկայի խնդիրներ են. ստուգվում են սովորողի ոչ թե մտապահված, այլ գիտակցաբար յուրացված գիտելիքները, անհատական կարողությունները և հմտությունները: Շատ կարևոր է հատկապես գնահատականի հիմնավորումը գնահատողի կողմից [19], ինչպես նաև սովորողներին իրենց իսկ գնահատմանը մասնակից դարձնելը: Գնահատումն ունի և՛ դաստիարակող, և՛ սոցիալական ուղղվածություն. Պետք է լինի գիտելիքների մակարդակին ճիշտ համապատասխան (արդարացի):

Դիդակտիկայի վերը նկարագրված սկզբունքները, որոնց զուգադրվում են ինչպես ավանդական, այնպես էլ նոր կամ նորացված մեթոդներ, պատմական զարգացման արդյունք են և հասարակության տվյալ փուլի զարգացման, նաև դասավանդման գործընթացի կատարելագործման պահանջով կարող են փոփոխվել, նորացվել կամ իրականացվել միանգամայն նոր ձևերով, հնարներով ու միջոցներով: Հասարակական պահանջով փոփոխվում է նաև ուսուցման հայեցակիմքը: Այսօր որոնվում են ուսուցման նոր մեթոդներ ու հնարներ, ուսուցման գործընթացում առաջադրվում են սկզբունքների և մեթոդների նոր համադրումներ, ավանդականին զուգահեռ՝ գործադրվում են ուսուցման կազմակերպման այլընտրանքային մոտեցումներ ու տարբերակներ (աղ.):

Ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաների համադրումը

Ավանդական ուսուցում	Ժամանակակից ուսուցում
Ուսուցման հայեցակիմբքը	
1. Դասախոսակենտրոն համակարգ է: Ուսանողը ուսուցման օբյեկտ է:	1. Ուսանողակենտրոն համակարգ է: Ուսանողը ուսումնառության սուբյեկտ է:
2. Կիրառվում է ավտորիտար, հեղինակահիմն ուսուցում:	2. Կիրառվում է համագործակցային [20], ուսանողդասախոս փոխներգործուն ուսուցում:
Ուսուցման կառուցվածքը (կազմակերպման ձևերը)	
3. Ուսուցումը միջինացված է՝ ուղղորդված միջին ունակություններով ուսանողների ուսումնառությանը:	3. Ուսուցումը անհատական է՝ ուղղորդված առանձին ուսանողի կարողությունների և հմտությունների զարգացմանը. հաշվի են առնվում ուսանողի մտավոր զարգացման, իրազեկության մակարդակը, գիտելիքների յուրացման տեմպը:
4. Դասախոսը պլանավորում է ուսումնառության գործընթացը, և չկան պայմաններ ու դրդապատճառներ ուսանողների նախաձեռնողականության և ինքնուրույնության համար:	4. Ուսուցման գործընթացը կառուցվում է երկուստեք՝ որպես ուսանողդասախոս երկխոսություն: Ուսանողն իրավունք ունի ինքնուրույն ընտրելու ուսումնական առարկաները, ուսուցման ձևը, կիսամյակը, տևողությունը:
5. Կիրառվում են դասի կազմակերպման միայն ավանդական ձևերը՝ դասախոսություն, գործնական, սեմինար պարապմունք, լաբորատոր աշխատանք:	5. Կիրառվում են նաև ժամանակակից տեխնոլոգիաներ՝ անհատական, պրոբլեմային, ծրագրավորված ուսուցում, «Կլոր սեղան», ճանաչողական խաղեր և այլն:
Ուսուցման բովանդակությունը	
6. Խորհրդատվական-խրատական ուսուցում է, դասախոսը վերահսկող է, բացակայում է հետադարձ կապը:	6. Դասախոսը կողմնորոշող է և խորհրդատու, իրագործում է դիագնոստիկա, շտկում է ուսանողի սխալները, նշում ուսումնառության արդյունավետության բարձրացման ուղիները:
7. Դասախոսը տեղեկատվության հիմնական աղբյուրն է, հիմնական իրազեկվածը:	7. Գոյություն ունեն և ուսանողի կողմից օգտագործվում են տեղեկատվության այլ աղբյուրներ. ուսանողը հաճախ ավելի իրազեկված է:
8. Հաղորդվում են պատրաստի, հնացած գիտելիքներ, չի խթանվում ուսանողների որոնողական աշխատանքը, նախաձեռնողականությունը:	8. Ուսանողը վարում է ճանաչողական ինքնուրույն գործունեություն, որոնում-գտնում է անհրաժեշտ թարմ տեղեկությունները:
9. Ուսուցումը հենված է ինդուկցիայից դեդուկցիա և հակառակը ընթացող սկզբունքների, օրինակների վրա:	9. Փաստական գիտելիքներին զուգահեռ՝ կարևորվում են օրինաչափությունների, միջառարկական կապերի յուրացումը. աշխարհայացքային պատկերացումների զարգացումը:
10. Գիտելիքը հաղորդվում է խոսքային-բանավոր (հիմնականում դասախոսություն) շարադրման մեթոդով (երբեմն՝ թելադրելով):	10. Գիտելիքը հաղորդվում է նաև ուսուցման նոր և նորացված, պրոբլեմային մեթոդներով, գրույցի, բանավեճի, ճանաչողական խաղերի գործնական ուսուցման ձևերով:

Ավանդական ուսուցում	Ժամանակակից ուսուցում
11. Դասախոսության ընթացքում ուսանողների պասսիվ-հայեցողական դիրքը չի խթանում նրանց տրամաբանության, մտավոր որակների զարգացումը:	11. Գիտելիքի հաղորդման պրոբլեմային ուսուցման մեթոդները զարգացնում են ուսանողի տրամաբանությունը, համեմատելու, վերլուծելու, քննելու-քննարկելու, եզրակացություններ կատարելու կարողությունները:
12. Ուսումնական առարկայի միայն դասախոսություններով ավարտվող կուրսը և ստուգման գործընթացի թեստային-գրավոր ձևը չեն նպաստում ուսանողների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:	12. Ուսանողակենտրոն փոխգործուն մեթոդների կիրառումը զարգացնում է ուսանողի բանավոր խոսքը, իսկ գրավոր շարադրման մեթոդը՝ գրավոր խոսքի մշակույթը:
13. Ուսուցումը հենված է գիտելիքի յուրացման վերարտադրողական, մեխանիկական հիշողությամբ մտապահման (մինչև իսկ նյութն անգիր վերարտադրելու) գործընթացների վրա:	13. Բնության և հասարակության զարգացման օրինաչափությունների, միջառարկայական կապերի յուրացումը թեթևացնում է ուսանողի հիշողության բեռը, զարգացնում է նրա տրամաբանական հիշողությունը, ուսուցումը դարձնում է գիտակցված:
14. Ուսումնամեթոդական գրականությունը չի օգտագործվում կամ օգտագործվում է մասնակիորեն:	14. Ինֆորմացիայի ինքնուրույն որոնման հիմնական աղբյուրը գրականությունն ու ինտերնետն են:
15. Գործածվում են ուսուցման ավանդական դիդակտիկական և տեխնիկական միջոցները:	15. Ավանդականին զուգահեռ՝ գործադրվում են նաև քոմպյուտերային ուսուցման նորագույն տեխնոլոգիաները:
Արդյունքների վերլուծությունը (ստուգում և գնահատում)	
16. Գնահատելիս չեն վերլուծվում ուսանողների ձեռք բերած արդյունքները, գնահատումն իրականացվում է միանձնյա, գործում է սուբյեկտիվ տարրը:	16. Ուսանողը մասնակցում է իր գնահատմանը, համոզվում է դրա արդարացի լինելու մեջ, տեսնում է իր ձեռքբերումները, բացթողումները:
17. Գնահատականը չի արտացոլում ուսանողների գիտելիքների տիրապետման, կարողությունների և հմտությունների իրական մակարդակը:	17. Գնահատվում են տրամաբանական դատողությունների վրա հիմնված գիտելիքները, դրանք գործադրելու հմտությունները, հետազոտական աշխատանքի տարրերի դրսևորման կարողությունները:
18. Գնահատականը դիտվում է որպես ճնշման և իշխանության զենք:	18. Գնահատականը որպես նպատակ չդիտելը, ուսանող-դասախոս բարյացակամ փոխգործունեությունը բացառում են ճնշման հնարավորությունը:

Դիդակտիկայի մեթոդաբանական նվաճումները հասարակության դարավոր փորձի և մանկավարժական գիտության բացահայտումների արդյունք են: Որպես դասավանդման տեսություն՝ դիդակտիկան անընդհատ զարգացման ընթացքի մեջ է: Դիդակտիկայի կատարելագործումը, սկզբնավորվելով անտիկ աշխարհից, շարունակվում է մեր օրերում, և որքան քաղաքակրթվում է մարդը, այնքան մեծանում է այդ պահանջը, խորանում է դրա բովանդակային էությունը:

Եզրակացություն.

1. Ուսուցումը դիդակտիկայի սկզբունքների և մեթոդների համալիր գործընթաց է, որոնք գործում են միասնաբար. յուրաքանչյուր դասին գործադրվում են մեկ կամ ավելի սկզբունքներ՝ մեկ կամ ավելի մեթոդների հետ համադրված: Դրանց արդյունավետությունը, միաժամանակ՝ մանկավարժական վարպետությունը, պայմանավորված են հենց այդ միասնության նպատակադիր լուծումներով:

2. Այսօր կարևորվում է ապագա մասնագետին ոչ այնքան տեղեկություններ հաղորդելու գործընթացը, որքան նրա կարողությունների ձևավորումը՝ տեղեկությոն ինքնուրույն ձեռք բերելու, ստեղծագործաբար ընկալելու համար. դասախոսը գլխավոր տեղեկատուն լինելուց վերածվում է ուսանողին կողմնորոշողի՝ տեղեկությունների ահռելի հեղեղում դրանք ճիշտ և համակարգված ձեռք բերելու և նախաձեռնողականություն ցուցաբերելու համար:

3. Ուսուցման ավանդական՝ խոսքային, զննական, գործնական մոդելը նպատակահարմար է գործադրել բակալավրատում, իսկ սովորողների ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի վրա հիմնված նորարարական՝ անհատական, պրոբլեմային, ծրագրավորված ուսուցման մոդելը՝ մագիստրատուրայում: Սակայն դրանք մեկուսացված չեն. կարող են հաջողությամբ փոխներթափանցել-փոխհամադրվել՝ ապահովելով ցանկալի արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ղույումյան Գ. Ե.**, Մանկավարժություն. Ե., 2005:
2. **Фокин Ю.** Преподавание и воспитание в высшей школе: методология, цели и содержание, творчество.- М., 2002.
3. **Голуб Б.** Основы общей дидактики.- М., 1999.
4. **Лернер И.Я.** Проблемное обучение.- М., 1974.
5. **Բարանսկի Յու.Վ.**, Դասի կատարելագործման պրոբլեմները.- Ե., 1981:
6. **Реан А. и др.** Психология и педагогика.- СПб., 2000.
7. **Эскендарова М.А., Алтуханова Л.Б.** Использование игровых методов обучения// Вестник Социально-педагогического института г. Дербента.- Дербент, 2011.- С. 29-32.
8. **Յան Անոս Կոմենսկի**, Մեծ դիդակտիկա.- Ե., 2010:
9. **Ուշինսկի Վ.Դ.**, Մանկավարժական ընտիր երկեր.- Ե., 1981:
10. **Выгодский Л.С.** Психология развития человека.- М., 2005.
11. **Խաչատրյան Պ.Գ.** Հայոց լեզվի մեթոդիկայի ժամանակակից հարցեր.- Ե., 1988:
12. **Թադևոսյան Պ.Ս.** Կրթության և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներ.- Ե., 2006:
13. **Фетискин Н.П. и др.** Социально-психологическая диагностика личности и малых групп.- М., 2002.

14. Проблемное и программированное обучение/ Под ред. Т.В. Кудрявцева и А.М. Матюшкина.- М., 1973.
15. Ամիրջանյան Յու.Ա. Պրոբլեմային ուսուցում.- Ե., 1984:
16. Պետրոսյան Հ.Ց., Գիտական գրավոր խոսք.- Ե., 2014:
17. Пиролова О.Ф. Особенности обучения в магистратуре современных вузов// Успехи современного естествознания.- 2010.- N5.- С. 78-80.
18. Աղղֆ Դիստերվեզ, Մանկավարժական ընտիր երկեր.- Ե., 1963:
19. Амонашвили М.А. Воспитательная и образовательная функция оценки ученика.-М., 1984.
20. Համագործակցային ուսուցում. Վերապատրաստողի ուղեցույց.- Ե., 2006:

А.Ц. ПЕТРОСЯН

ДИДАКТИКА: СОПОСТАВЛЕНИЕ ТРАДИЦИОННЫХ И НОВЕЙШИХ ТЕХНОЛОГИЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

Рассматриваются важнейшие составляющие педагогического процесса: задача сопоставления взаимодействующих принципов дидактики и методов обучения.

Сравниваются методы и принципы, которые обеспечивают большую эффективность в процессе обучения.

Ключевые слова: педагогический процесс, обучение, дидактика, принципы, методы обучения, сопоставление методов и принципов.

H.Ts. PETROSYAN

DIDACTICS. COMPARISON OF TRADITIONAL AND UP-TO-DATE TECHNOLOGIES IN THE TEACHING PROCESS

The problem of interactive comparison of the principles and teaching methods of didactics – the most important components of the pedagogical process is considered. The comparisons of the principles and methods which are most efficient in the teaching process are introduced.

Keywords: pedagogical process, teaching, didactics, principles, teaching methods, comparisons of principles and methods.